

ՆՈՐԷՆ ԿԸ ՀՈՍԻՆ

Նորէն կը հոսին,
 Զուրերն Գանգէսին,
 Ոսկիին ներքեւ արեւներու ձոյլ:
 Նորէն կը բանայ ծաղիկներն իր վառ
 Ծառն իմաստութեան
 Բարոյն ու չարին,
 Որուն սակ նըսած լոյսն ընդունեցիր
 Ո՛վ լուսաւորեալ:

Այն հին օրերուն՝
 Երբ լոյսն արեւուն, ու շաղն երկնին,
 Կ'իջնէին մաղէն տառապանքներու,
 Ուրախ չէր իշխանն
 Ինչպէս ըստուկն իր,
 Կ'ապրէին անոնք համահաւասար,
 Վարճամակին սակ
 Յաւերու հագար:
 Զի ժըպիսն ու վիճ ճոյն կայլակներով
 Ա՛ն կը գողգողան,
 Երբ քրեւառութեան
 Վըրայ կը տեղան:

Այն մութ օրերուն,
 Դուն աշխարհ եկար ո՛վ Սափամունի,
 Ու հագիւ հըպած հոգիդ իրերուն,
 Ա՛ն զգացիր դուն
 Տըսում Գօթուման,
 Թէ ցաւ է ծնունդ,
 Ծերութիւն ու մահ,
 Ըղձանք, ցանկութիւն,
 Այս երկրի վըրայ:
 Թէ պէտք է քաղել խորն ոչնչութեան
 Ծարաւն հանոյքին,
 Փառքին, ապրումին,
 Մտնել նիրվանա:
 Ինչպէս երբ քափին

Գետերն անհամար խորը ուկէանին,
 Կը կորսընցընեն
 Անուններն իրենց,
 Այնպէս ալ մարդը լոկ ոչնչութեան
 Յանձնէ քող ինքզինք,
 Ու մոռնայ աշխարհն:

Այսպէս կ'երգէին
 Շրքներդ բոցավառ,
 Ուրացումներու հրդեհէն կախարդ,
 Եւ հոգիդ ինկած չուրերուն վըրայ
 Մեծ նիրվանային,
 Լուսաւ մը ինչպէս անաշխարհային,
 Կ'անէր, կը մեծնար:

*

Ու գիշեր մը լուռ,
 Մեծ ուրացումի խոկէն հալածուած,
 Փախար անըւմար,
 Տունէն ու սէրէն.
 Սըբազան գիշեր, ինքնակորստեան
 Եւ ինքնագրքման:

— Ես ուրեակ ուղին,
 Հաւասքի, դասման,
 Խօսքի ու գործի, հիւղ մտածումի
 Ու հիւղ ապրումի
 Եւ ինքնամոխիւման —,
 Կ'ըսէիր յանախ:

— Ես միջին համբան,
 Հեռու հանոյքէն ու մահացումէն,
 Ճեմարիս ուղին՝
 Որ կ'առաջնորդէ մեծ հեմարսու-
 Ու մեծ հանգստեան, [քեան,
 Գէպի նիրվանան —:

Այսպէս կանչեցիր
 Մարդերը քեզի,
 Ու բացիր անոնց աչքերուն ճշմարտ
 երազն ըսպիսակ,
 Փրուած անհունի բոցէ շրջերուն,
 Ուր կեանքը մարդուն
 Կը բիրեղանար,
 Գառնալու կրկին, այն մեծ աղբիւրին,
 Ուրկէ շիթեր են ոգիներն մարդոց,
 Փրքած ու ինկած
 Դժբախտութեան ծոց:
 Ու բոցին մէջէն, բոցով սրբարար,
 Դուն ալ մոխրացար,
 Երբ արեւը վառ Գանգէսին վըրայ,
 Վերջալոյսին դէմ
 Կրակ կը տեղար:

Բայց բոցն այն մահուր,
 Որով կ'ուզէիր մահել այս աշխարհ,
 Ինկած է այսօր
 Ասերու կոխան
 Անոնց՝ որ օր մը քաղցր, անվարան,
 Յաւն իրենց գրկած
 Ան քեզի եկան:

* *

Դուն կաս, թէ չըկաս,
 Ո՛վ Սափիամունի,
 Տեսում Գոթուման,
 Եղած էս բնաւ ցաւերուն դիմաց
 Ամբոխներու հոծ,
 Որոնք սակաւին Գանգէսի ափին,

Վիշերով հազար,
 Լուռ կը հեծկլտան:
 Անունըդ միայն շրջերուն անոնց
 Դեռ կը դողդրղայ,
 Անհազանգն ինչպէս մերկ համարտ-
 Ո՛վ քաղցր անդունդ՝ [թեան:
 Որուն գիշերուան վազեր են մարդիկ
 Բոլոր դարերու,
 Կեանքէն անժառանգ:

* *

Նորէն կը հոսին,
 Զուրերն Գանգէսին,
 Ողբերգութեան դէմ ժամանակներու,
 Նորէն կը բանայ
 Ծաղիկներն իր վառ,
 Ծառն իմաստութեան, բարւոյն ու չա-
 Բայց չարիքն է նոյն, [րին,
 Հզօր, սիրական,
 Յորձին մէջ առած մարդն անօգնա-
 Կը սանի մահուան, [կան,
 Գազանը ինչպէս իր ոտը բերնած:

Պուսսա, հէ՛ք Պուսսա,
 Մարդն այն զոր օր մը վրկել ուզեցիր
 Մարդն անասնաձեւ,
 Նեւած իր հոգին լաթի մը նըման,
 Գարեապարին սակ կեանքին վաշտէր,
 Քեզի կուտք քրած
 Կը պաշտէ ինքզինքն:

Ե.Դ.Ի.Վ.Ա.Բ.Գ.

